տեարք, և խնդրէին 10,000 ոսկիս, և զայն եւս ետ · եւ 'ի վերջոյ ետ նմա 40,000 ոսկիս հատուցանել զամենայն պարտսն։

Իսկ Թէոփանեայ չ'չատացեալ այնու 'ի դառնալ իւր յԵրուսաղէմ յամի 1639 Ժողովեաց զամենայն եկեղեցական զարդս արծաթ և ոսկի մերկացուցեալ զեկեղեցիս, և առաքեաց յԱղէքսանդրիայ վաճառել զայնս, խնացեալ զայս ազգայինք նոցին անդ՝ Ժողովեցան 'ի խորհուրդ, և մի ոմն յերեւելեաց նոցին գնեաց զամենայն անօթսն, անթերի վճարեալ զգինն, և զսպասն վերստին դարձոյց յեկեղեցիս Երուսաղէմի 'ի յիշատակ իւր · այսպէս պատմէ Յոյն Արաբացի պատմիչն։

ԳԼՈՒԽ ԽԿ.

Ղենգութիւն Յունաց։ Տալ գրել Գրիգորի զաժին տեղիս Հայոց։ Գիւղականք Բեթղեհէմի։ Տան Զատկի։ Վանք Փրկչի · Չկանթեղ 'ի Ս · Ծնունդ։ Վանք Բեթղեհէմի եւ խանն։ Մահ Գրիգորի Պատրիարքի։ Ամիր Աղիզ։

Ի ՍՄԻՆ ժամանակի Յոյնք տիրէին այրին Ծննդեան Քրիստոսի և մեծի եկեղեցւոյն Բեթղեհէմի՝ Արքունի հրովարտակաւ, եւ 'ի ձեռս նոցա էր փականք դրանցն։ Դէպ եղեւ Գրիգորի Պատրիարքի գնալ 'ի Բեթղեհէմ, և ըստ սովորութեան իջանել յԱյրն սակս ուխտի, և մինչ կայր նա անդ յաղօթս, եհաս սպասաւոր Բդեշխին Քէնան աղա, ըստ գանկատանացն Յունաց, եւ կոչեալ զԳրիգոր էած յԵրուսաղէմ և կացոյց առաջի դատաւորին, եկն և Աթանաս փոխանորդ Պատրիարքին Յունաց, և սկսաւ ամբաստան լինել զԳրիգորէ՝ և ասէ, Կայսերական հրովարտակաւ փականք այրին Ծննդեան Քրիստոսի են 'ի ձեռս Յունաց, և չէ օրէն առանց հրամանի Պատրիարքին մտանել ումեք յեկեղեցին, ոչ 'ի Հայոց և ոչ 'ի Լատինաց և ոչ յայլոց քրիստոնէից։ Իսկ Գրիգորդ այդ՝ եմուտ անդ։ Ի հարցանել դատաւորին, ետ պատասխանի Գրիգոր՝ եւ